

հայոց հասարակութիւնը տար տաս տարի դոյու-
թիւն ունեցող հայոց (Վշախ) լրագրին տարեկան
մօտ 2000 բաժանորդ, մենք առանց նորից դի-
մելու հասարակութեանը, մեր խմբագրական փո-
ղից կօգնէինք և «Justice» լրագրին և թղթա-
կիցներ կը պահէինք արտասահմանում, որոնք կը
գրէին եւրոպական լրագրներում հայոց խնդրի
մասին: Մեր հարուստները ոչինչ չեն անում, ա-
մեն բան մենք պէտք է անենք, մենք, որոնք
շատ համեստ, չնչին միջոցներ ունենք: Թող այդ
յիշէ հայոց հասարակութիւնը: Իսկ Մօսկվայի, Ս.
Պետերբուրգի, Կ. Պոլսի, Աստրախանի, Թիֆլիսի,
Բաքու, Լոնդոն նստող միլիոնատէր հայերը
ծաղրում են մեր արած ջանքերը: Յաւում ենք,
շատ ցաւում ենք, որ մենք միլիոնատէր չենք,
եթէ ոչ մենք ցոյց կը տայինք մեր անտարբեր
հարուստներին ինչպէս պէտք է գործել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻՍ

Նոյեմբերի 4-ին պատգամաւորների ժո-
ղով փոխնախագահը բացեց. նիստը,
յայտնելով, որ ժողովը կատարելապէս կազ-
մակերպւած է և հրաւիրեց ժողովի նա-
խագահ Բրիստօնին իր տեղը բռնել: Նոր
նախագահ Անրի Բրիստօն, շնորհակալու-
թիւն յայտնելով ժողովին իր ընտրութեան
համար, ասաց հետեւեալը. «Իսկ ինչ վրա
մեծ պարտականութիւն դրիք: Նախագա-
հական այս բաղկաթոռը զբաւել համար-
ձակվելուց առաջ ես պէտք է մոռանամ,
թէ ինչպիսի նախորդներ եմ ունեցել: Նը-
րանց օրինակին հետեւելով, ես ես կը ծա-
ռայեմ հանրապետութեանը և ժողովրդին,
և յոյս ունեմ, որ ձեր օգնութեամբ կարող
եմ կատարել իմ այդ պարտականութիւնը:
Վերջին ընտրութիւններով Ֆրանսիան դար-
ձեալ ապացուցեց, որ նա կամենում է ուժեղ
և ազատամիտ կառավարութիւն ունենալ:
Ես կը պաշտպանեմ խօսքի ազատութիւնը
ինչպէս խօսողների ինքնապէս և խողների
համար և կը պաշտպանեմ մեր առաջա-
դէմ և խաղաղասէր հանրապետութեան ի-
րաւունքները: Յոյս ունեմ, որ դուք միշտ
կօգնէք ինձ ձեր համակրութեամբ:» Այ-
նուհետեւ նախագահը յայտնեց, որ երեք
հարցեր են առաջարկված Տոնիսի գոր-
ծերի վերաբերութեամբ: Մինստը նախա-

գահ ծել Գերրի խօսք պահանջեց և ա-
ռաց հետեւեալը. «Ես ցանկանում եմ մեկ-
նել ձեզ, թէ ինչ դրութեան մէջ ենք
գտնվում ես և իմ ընկերները այդ հարցերի
վերաբերութեամբ: Այժմեան մինիստրու-
թիւնը, որ բոլոր ժամանակ վայելում էր
անցեալ ժողովի հաւատարմութիւնը, միշտ
հաւատացած է եղել, որ իր գոյութիւնը
պէտք է գաղափարների նոյն ժողովի գործու-
նէութեան դադարման հետ միաժամանակ
ինչպէս ուղղում են նային վերջին ընտրու-
թիւնների վրա, բայց մենք ինքներս հաս-
կանում ենք, որ մինիստրութիւնը պարտա-
ւոր է պատգամաւորների ժողովին և հան-
րապետութեան նախագահին գործելու ա-
զատութիւն տալ: Այդ պատճառով մենք
անպատճառ հրաժարական կը տանք: Եթէ
մենք մինչև այժմ չենք հրաժարվել, դրա
պատճառը չափազանց շատ մեղադրանք-
ներն են, որոնց մենք ենթարկվեցանք, և
մեր ցանկութիւնը, որ պատգամաւորների
նոր ժողովը իր առաջ պատասխանատու
մինիստրութիւն ունենայ: Խնդրում եմ ա-
մենամօտ օրը նշանակել հարցերը քննելու
համար: Մինիստրութիւնը պատրաստ է
պատասխանել: Պատգամաւորների ժողովի,
երկրի և կառավարութեան շահերը պա-
հանջում են, որ գործը չը յետաձգվի:»
Մինիստրի վերջին խօսքերը հաւանութեամբ
ընդունվեցան: Գնահատութեամբ որոշվեցաւ
հետեւեալ օրը նշանակել այդ հարցերի
քննութիւնը: Նոյեմբերի 5-ի նիստը աւե-
լի բաղկամարդ էր: Հասարակութիւնը լըց-
ւել էր իր համար պատրաստված տեղերը:
Ինչպիսիք անհայտ լուծարում նստած էր գեր-
սանական դեսպան իշխան Լօհնեօ: Ժիւլ
Ֆերրի ասաց հետեւեալը. «Կառավարութեանը
մեղադրել Տոնիսի քաղաքականութեան
համար մի և նոյն է, թէ մեղադրել պատ-
գամաւորների նախկին ժողովը, որ դեռ
յուլիսին, երբ սկսվեցաւ Տոնիսի ապա-
տաւթութիւնը, իր հաւատարմութիւնը
յայտնեց մինիստրութեանը: Տոնիսի վրա
հովանաւորութիւնը անհրաժեշտ է Ֆրան-
սիայի համար, որովհետեւ Տոնիսը Ալժի-
րիայի բանալին է և Ֆրանսիան այնտեղ չի
թոյլ տայ ոչ օտարի տիրապետութիւնը և
ոչ անիշխանութիւն: Ֆրանսիական բոլոր

կառավարութիւնները այդ տեսակետից են
նայել գործին: Վերջին տարիներում ապա-
տաւթները 2365 անգամ անցել են Ալժի-
րիայի սահմանները: Ասում են, որ մենք
սխալներ ենք գործել: Երանի նրան, ով սը-
լալ չէ գործում: Չեմ կարծում, որ ինձ
ընդհատողներն էլ անսխալական լինեն:
Բացի այդ ասում են, որ մենք պատերազ-
մում էինք առանց պարլամենտի համա-
ձայնութեան: Մենք պատերազմ չենք ու-
նեցել, չենք կուլել բէշի զօրքերի հետ:
Մենք Տոնիս օգնական զօրքեր ուղարկե-
ցինք այն գործը կատարելու համար, որ
մեղ յանձնել էր պարլամենտը: Կազարսա-
յիդի դաշնագիրը կապելուց յետոյ Ֆրան-
սիական զօրքերը յետ կանչվեցան առողջա-
պահական պատճառներով:» Ժիւլ Ֆերրի
յայտնութիւնների վճռողական և համար-
ձակ ձեւը փոփոխեց հասարակութեան տը-
րամադրութիւնը մինիստրութեան վերաբե-
րութեամբ: Այժմ այլ ևս չեն խօսում մի-
նիստրութիւնը պախարակելու մասին, այլ
ամենքը մտածում են Գամբետայի ապա-
գոյ կառավարութեան մասին: Լրագրները
գովում են պատգամաւորների նոր ժողովի
նախագահի ձառը: Բրիստօն դեռ ևս չէ
կարող զսպել զանազան տարրերը, որոնք
խանդարում են պարլամենտական վիճաբա-
նութիւնների կանոնաւոր ընթացքին:
Բրիստօն հանրապետական կուսակցու-
թեան յարգված անդամներից մէկն է: Նա
աւելի նման է Գրիվին, քան Թէ Գամբետ-
ային, որովհետեւ հասարակ մարդ է և
ատում է թատրոնական էֆէկտները: Ա-
մենքը կարծում են, որ նա իր պաշտօնա-
կատարութեան ժամանակ անկողնապահ
կը լինի, իսկ Բուրբոնեան պալատը հա-
մեստ կեանք կը մտցնի: Ասում են, որ Գամ-
բետաւ առաջարկեց Բրիստօնին արդարու-
թեան մինիստրի պաշտօնը, բայց նա մեր-
ժեց այդ առաջարկութիւնը և նախապա-
տուեց պատգամաւորների ժողովի նախա-
գահութիւնը:

Կ. ՊՈԼՍԻ ՄԻՆԵՐԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԵՐԷՆ ՄԻՆԵՐԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՆ ԿԵԼՈՐՈՆԱ-

կան ժողովոյ իջ. նիստը տեղի ունեցաւ
Վալաթիոյ Կեղրոնական վարժարանին մէջ,
նախագահութեամբ Առաքել Ալթուն Տիւր-
րի էֆ. և ներկայութեամբ 40-ի չափ եւ-
րոսփոխանաց: Ատենին 71/2-ին բացուելով,
վերջին երկու նիստերու ատենագրութիւն-
ները կարդացուեցան և վաւերացուեցան:
Գիւսակական թղթակցութիւնը կը պարու-
նակէր մի նամակ, զոր Կիլիկիան ընկերու-
թեան վիճակահանութեան հաւաքիչը գը-
րած էր Գիւսակին, քննութիւն պահանջե-
լով Պ. Ա. Արփիարեանի դէմ, ում կը վերա-
գրէր 72 տոմսակաց հաշուանկագրութիւն.
յետ երկար վիճաբանութեան, խնդիրը
Տնօրէն ժողովոյ քննութեան յղուեցաւ:
Նախորդ նստին որոշման համեմատ ութ
երեսփոխանաց ընտրութեանը ձեռնարկուե-
լով, քուէից բացարձակ առաւելութեամբ
երեսփոխան ընտրուեցան Տիւրք Արամ Գա-
վաֆեան, Լեոն Գափամաճեան, Համար-
ձում Գաղապեան, Մաքսուտ Հարէնց, Միհ-
րան Չըպուքճեան, Ստեփան Սուրենեան,
Տիգրան Տ. Ներսէսեան և Տիգրան Մանու-
կեան: Այս քուէարկութենէ յետոյ 13 որո-
շիչ ձայներու թուոյն խնդիրը նկատողու-
թեան առնուելով, որոշուեցաւ այդ թիւ
14-ի հանկ նոր ընտրութեանց պատճա-
ռաւ: Այնուհետեւ Տնօրէն ժողովոյ Ատե-
նապետ, Տ. Մինաս Չերազ, խօսք առնով
իւր հրաժարման պատճառները բացատրող
բանախօսութիւն մ'ըրաւ, զոր ընթերցողք
պիտի գտնեն լրագրոյս ներքին երեսներուն
մէջ. այս բանախօսութիւն, որ մեծ ապա-
ւորութիւն ըրաւ երեսփոխանաց վրայ, կա-
պացուցանելու թէ արդի Տնօրէն ժողովը,
իւր հնգամեայ պաշտօնավարութեան մի-
ջոյն, յաջողած է տարեկան 1,300 ոսկի
խնայողութիւն և 700 ոսկի հասոյթի ա-
ռաւելութիւն յառաջ բերել, այսինքն տա-
րեկան 2,000 ոսկի շահեցնել ընկերութեան,
հակառակ իւր դէմ յարուցուած ներքին և
արտաքին դժուարութեանց և հակառակու-
թեանց, այս համարատուութիւն ջերմ ծա-
փահարութեամբ ընդունուեցաւ ժողովա-
կաններէն Տ. Մինաս Չերազ կեղրակաց-
ներ թէ իւր անձնական գործոց ծանրա-
ցումն է պատճառ իւր հրաժարման: Երես-
փոխանաց ամենաստուար մասը պահանջեց

ինչ փոյթ հիմնարկութիւնը լաւ գնայ թէ վատ,
օգուտ բերի թէ չը բերի ազգին, գլխաւորն այն
է որ նոր հիմնարկութիւնը իր պաշտօններով
նիւթական արդիւնքի նոր աղբիւր ներկայացնի
ինձ, իմ ընտանիքին, իմ ազգականներին:»
Այդ պատճառով ամեն ճայ աշխատում է
ամեն պաշտօններ ձեռք բերել իր, իր ընտանի-
քի անդամների, կամ գոնէ իր ազգականների
համար: «Աւելի լաւ է պաշտօնի վրա նշանակել
տամ անընդունակ ազգականին, քան թէ առա-
սարակ ընդունակ հային, մտածում է հայը: Ինձ
ինչ փոյթ որ ազգը օգուտ ունենայ, ինձ
հարկաւոր է որ ես, կամ ազգականներս շահ-
վենք:»
Այդ, հայի մէջ դեռ չէ ծնված, չէ արթնացած
ազգութիւն ան գաղափարը, այլ միայն ազգա-
կանութեան գաղափարը:
Բայց որովհետեւ ամբողջ քաղաքը, ամբողջ
հասարակութիւնը, ամբողջ ազգը չեն կարող ազ-
գականներից բաղկացած լինել.— այդ պատճա-
ռով հայերը միմեայ մէջ ոչինչ համերայնութիւն
չունեն այնպիսի գործերում, որտեղ չէ կարելի
ընտանեկան, ազգականական շահերը մի-
մեանց մէջ կապել:...

Ընդհանուր, հասարակական, ազգային գործե-
րում համերայն կերպով կարող են գործել մար-
դիկ, որոնք բոլորն էլ վաւերած են մի ընդհա-
նուր ազգային գաղափարով, թէ և ոչինչ ազգա-
կանական կապեր միմեանց մէջ էլ չունենային:
Բայց հայերի մէջ դուք չէք տեսնի որ մի ընդ-
հանուր գործ երկար տանելիս լինէին, մի ընդ-
հանուր նպատակով մի ասան մէջ հաւաքվելիս

լինէին մարդիկ, որոնք միմեանց մէջ ազգակա-
նական կապեր չունենային:
Կեղանում մարդիկ, որոնք ընդհանուր հասա-
րակական գործ են տանում, կամ ծառայում են
մի հիմնարկութեան մէջ կամ ազգականներն են,
կամ ղեկավարութիւն ունեն ազգականները դառ-
նալ:
Ազգականական կապերից դուրս չը կան հա-
սարակական կամ ազգային շահեր հայի հա-
մար:
* * *
Բայց ես տեսնում եմ որ ֆէլիտոն ծանր է
դառնում, սկսում է առաջնորդող յօդուածին
նմանվել: Խօսենք աւելի թեթեւ և դուրեկան բա-
ների մասին:
Նորերում մի հայ ազգիկ իրան սպանել է
րէվոլւթից, որովհետեւ սիրեկանը խոտա-
ցել էր նրան ամուսնանալ նրա հետ և յետոյ,
երբ ազգիկը արդէն յղիացել էր, համալսարանա-
կան երկրասարդը հրաժարվել է իր տուած
խօսքից:
Ի հարկէ շատ լաւ է արել ազգիկը որ սպա-
նել է իրան, եթէ ոչ, ի հարկէ, ամօթ կը լինէր
այսինքն մի անհարգաւոր երեսայի հետ: Ամօթ է,
հրապարակական է, չորովհետեւ աշխարհ է,
հրապարակական է. Հրապարակապէս, պարզա-
պէս մի բան անել դա վերին աստիճանի անբա-
րոյականութիւն է համարվում մեզանում, իսկ
ծածուկ, գաղտնի կերպով ամեն բան կարելի է
անել:... Եւ այդպիսով մարդը միշտ բարոյական
է մեռում:
Պարզ և անկեղծ կերպով սիրել, օրինակի հա-

մար,—դա վերին աստիճանի անբարոյականու-
թիւն է: Իսկ խաբել, կաշառքներ առնել, քան-
դել, կողոպտել մի քանի ընտանիքներ և նրանց
կարողութեամբ հարստանալ, կամ ամենաստոր
մասնութիւններ անել մի մարդու վրա, նրան
սարսափելով վտանգի մէջ գցելով,—դա բարոյա-
կան է, դա շատ բարոյական է, որովհետեւ ծա-
ծուկ է:...

* * *
Արի, բարեկամ ընթերցող, ձեռքիցդ բռն-
եմ մի ման ածեմ քեզ հայոց հասարակութեան
միջով, ինչպէս մի պանօրամայի մէջ, ինչպէս
մի մուգեւումի մէջ, ամեն բան քեզ ցոյց տալով
և բացատրելով:
Տեսնում ես այդ շքեղ տունը. Նրա տէրը կա-
ռուցել է այդ տունը սուտ թղթադրամ չինելով:
Նա յարգված է ամենքից, նա բարոյական
մարդ է:
Ահա, տեսնում ես այդ վայելուչ կերպով
հագնված, քաղցր ժպիտը երեսին հասակաւոր
մարդուն: Նա թուղթ խաղալու մէջ խաբելով է
հարստացել: Նա բարոյական մարդ է:
Տեսնում ես այդ մարդուն, որ յարգելի դիրք
ունի հասարակութեան մէջ. Նա քանդել
է մի քանի ընտանիքներ, կողոպտել է նրանց,
նա հարստացել է կաշառքներով: Նա բարոյա-
կան մարդ է:
Ահա անցնում է քեզ շորերով հագնված
մի կին: Նա ստիպում է իր մարդուն կա-
շառքներ առնել իր ծառայութեան մէջ, որ-
պէս զի կարողանայ լաւ ապրել և այդ դեռ
բաւական չէ. նա ուրիշ կողմից խաբում է իր

մարդուն, ունենալով մի կամ մի քանի հարուստ
սիրեկաններ, որոնք նրա համար վճարում են
մոզային մազապիւններում նրա պատուիրած չքեղ
հագուստները: Նա բարոյական կին է:
Նայիք այդ իշխանուհուն որ անցնում է գե-
ղեցիկ կառքով, լիւրջով հագած ծառայով: Նրա
հարազատ քոյրը վերջին աղքատութեան մէջ,
փողոցներում մուրացկանութիւն անելուց յետոյ,
մեռաւ խոնամ մի գետնափորում: Այդ քոյրը
իշխանուհին երբեք չէ ընդունել իր տանը, եր-
բեք չէ օգնել նրան, ոչ ոք էլ չը գիտէր, թէ
նա ունի մի քոյր: Նա բարոյական կին է:
Տեսնում ես ամենքից յարգված այդ մարդուն
Նա փաստաբան է եղել մի հարուստ մարդու,
որի կարողութիւնը իրան է սեփականացրել,
պաշտպանելով իր հաւատարմատուի շահերը:
Նա բարոյական մարդ է:
Ահա մտնեցել է քեզ փողոցում մի երիտա-
սարդ: Նա քաղցր ժպիտը երեսին, սիրալիւր
կերպով սեղմում է ձեռքը: Նա երկու օր սրա-
նից առաջ իր բարեկամին նամակ է գրել քո
մասին, համոզելով նրան, որ աշխատի մասնեկ
քեզ ուր հարկն է: Նա բարոյական մարդ է:
Ահա հանդիպում է մեզ մի արեղայ, Աստու-
ծու սպասաւոր: Աչքերը ցած գցած, նա անց-
նում է մեր մօտով (Աստուած օրհնի) ասելով:
Մի չարաթ սրանից առաջ, այդ մարդը, որ
ամեն օր եկեղեցու բնից արտասանում է չաւ-
ղաղութիւն ամենքին, աստուածային խօսքե-
րը, քո մասին ամենաստոր մասնութիւն է
արել, մեղադրելով քեզ ամենախիստ յան-
ցանքների մէջ: Նա բարոյական մարդ է:

որ այդ հրաժարական չընդունուի, քանի որ Տնօրէն ժողովը գոհացուցիչ կերպով վարած էր իւր պաշտօնը. Տնօրէն ժողովը պընդեց իւր հրաժարականին վրա, և վիճարանութիւնը երկուք ու կէս ժամ տեւեց անընդհատ: Երեսօրեաններէն շատեր դիտել տուին թէ Տնօրէն ժողովը Ատենականութիւն հրաժարումը կրնար յառաջ եկած լինիլ իւր անձին դէմ լրագրաց մէջ հրատարակուած և հասարակութեան մէջ մասին մէջ տարածուած վիրաւորիչ անխափութիւններէ, և թէ ճիշդ այս պատճառաւ պէտք էր կեդրոնական ժողովը մեծամասնութեան փտահաւանութիւնը վայելող վարչութիւն մը զոհել փոքրամասնութեան մը հակառակութեանց, որ քննադատ օրինակ մը կը լինի ընկերութեան ապագային համար: Բայց Տ. Մինաս Զեքիյա յայտարարեց թէ իւր հրաժարման մեծագոյն պատճառն է իւր անձնական գրադմանց աւելնալը: Ժամը 12-ի մօտեցած լինելով, հարկ եղաւ ատենը փակել, վիճարանութեան շտրունակութիւնը թողուելով յաջորդ նշմարին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի:

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլսոյ, 28 հոկտեմ.

Պօլսեցի հարուստներու անտարբերութեանը մասին շատ անգամ գանգատներ հրատարակուած են ձեր թերթին մէջ, մանաւանդ ձեր ընտիր աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսեանի կողմէն. Այսօր նոր ապացոյց մը պիտի տամ այդ ճշմարտութեան, որ ձեր մի շնորհա փոխտփայի ջիգերուն դպած է:

Վիեննայի մէջ հրատարակուող «Journal d'Orient»-ի խմբագրապետը, պ. Ֆ. Սալ, կը գրէ մի հայազգի բարեկամս:

«Յաւոք սրտի կը տեսնեմ թէ Կ. Պօլսոյ հայ գաղթականութիւնը շատ յետադէմ է հայրենասիրութեան մէջ: 150,000 հոգւոյ մէջէն 30 բաժանորդ ունի անդ: Այդքան բազմաթիւ և այդքան հարուստ գաղթականութեան մը համար ծաղրելի է այսպէս օգնել «Journal d'Orient»-ին: Տաճկաստանի մէջ 150 անձեր կան որոնց լրագիր կը յղեն ձերպատէ 3—4 ամիսէ ի վեր. նոքա հարուստ հայեր են, այլ բաժանորդ չեն գրուիր, և այսուհետեւ որ լրագիրս դժուար պիտի մտնէ Տաճկաստան, բնաւ բաժանորդ չը գրուին գուցէ:

Ահա տեսնում ես այդ պատկառելի ծերունի քահանային, ժողովուրդի հովիւին: Նա կողովաւոր է իր նմաններին և ուր հարկն է կաշառքներ է ուղարկում աւագ-քահանայութիւն, կամ կամուրջով կա ստանալու համար: Նա բարոյական մարդ է:

Նայիր այդ ցիլինդրաւոր մարդուն, վերջին մօղայով հագնված: Նա ազնուկ է, բոխիչ է, նոստարուս է: Նա քեզ ասում է թէ ինքն բեզական, իշխանական ծագումով է, կամ քաղաքացի է, երևանցի է, շուշեցի է... Բայց իմացիր որ նա քաղաքացի չէ, այլ գիւղացի է և ամառում է իր ծագումով. նրա երկու հարազատ եղբայրները Վարաքաղի այս ինչ գիւղում աբրիններով են ման գալիս, իսկ հարազատ քոյրը, ըստիկ կոչուած ռոտներով է մանգալիս ու դաշտում աշխատում: Պարոնը հերքում է որ գիւղացի է, ծածկում է քեզանից իր ծագումը, ամառում է իր եղբայրներից և քրոջից, որովհետեւ գիտաւորութիւն չունի նրանց նիւթապէս օգնելու, այլ թողնում է նրանց աղքատութեան մէջ: Նա բարոյական մարդ է:

Վերջապէս ցոյց կը տամ քեզ մի մարդուն, և զրանով կը վերջանայ իմ հազադիւստ պատմութեան: Այդ մարդը իր կենքի նպատակն է շինել ամեն ինչ որ նոր է, թարմ է, առաջադէմ է իր ազգի մէջ: արտաւորել, մեղմել, մասնակցել, Կա ազգայնի հայ է, դա ինքն ազգի բարեբար է և ուրիշ բարեբարների օգնական է, դա բոլոր հայերից յարգված մի անձ է, որովհետեւ բոլորը, ինչ որ նա անում է ծառուկ է: Կա հայերի մէջ ամենաբարոյական մարդն է:

Կը խոստովանիմ ձեզ թէ դարմանք կազդէ ինձ այդ անտարբերութիւն, ում կը խառնուի նաև ազգաութիւնը:

Այս տողեր բաւական պերճախօս են, քանի որ կը յայտնեն թէ Կ. պօլսեցի փողատերն 20 ֆուտակ կը զլանայ մի թերթի համար որ նպատակը չընդունիր ոչ մի կառավարութիւն և մեծ ծախքեր յանձն կանու, 1,000 օրինակ ձրի յղելով Եւրօպայի բոլոր դիւանագետներուն և հրատարակչներուն: Եթէ ուսումնայք և Մշակ չը լինէին, մեծ ամօթ պիտի լինէր ազգին:—Եւ որքան անիրաւ են մեր հարուստներ, նրա կը բարկանան ս. պատրիարքին դէմ, որ յունաց պատրիարքական փոխանորդին գանգատած էր հայ մեծատուններէն, յոյն մեծատանց աղքատներութիւնը գովելով:

Ս. պատրիարքն այսօր Միացեալ ընկերութեանց նուիրեց Մշակի խմբագրութեան ուսումնայք կողմէն իրեն յղած անձնական նուէրն (1,000 բուրլի). նորին սրբազնութեան դրամական անձկութիւն հանրածախօթ է, այլ իւր անձն մոռցած երբ լսեց թէ ընկերութիւնն չէ կարող հոգալ իւր 32 տարրական դպրոցներու ամբողջ ծախքը: Արեւի յառաջ Պաքուի ազգայնաց կողմէն իրեն նուիրած գումարն ալ նոյն ընկերութեան յանձնած էր նորին սրբազնութիւնը, և պ. Մինաս Զեքիյա, Տնօրէն ժողովը ատենապետութեան վերջերս ձեր Հոսոս փոխտփայի ազգականաց ճիւղիթական մեքենայութեանցը համար հրաժարելուն առթիւ, իրաւամբ ասած է. «Շնորհակալ եմք յատկապէս բարձրաշնորհ պատրիարքին, որ մեր օրով, նուիրեց ընկերութեան գրեթէ 400 ոսկի, իւր առատաձեռնութեամբ աղօտացունելով մեր մեծամիտ մեծատունները»:

Ահա այսպիսի մեծատանց աջակցութեամբ պիտի լուծէ խեղճ պատրիարքն հայկական խընդիրն: Մինչև ցայժմ կատարուած գործերն և ստացուած յաջողութիւնն հրաշք են գրեթէ: Ս. Պատրիարքը միայն ողջ յոյն նուիրած է դեսպաններուն և պետութեանց, և միայն պահպանելով վարձատրած է Եւրօպայի թղթակիցներն և խմբագիրներն: Ատուած մեր անխիղճ հարուստներուն կամ դարձ տայ, կամ բարձ:

Այս վայրկեան կը լսեմ թէ Փափաղեան, Պէկեան և ուրիշ մի քանի օտարասէր երեսփոխանք զաղտնի գումարութիւն կանեն պատրիարքը տապալելու համար: Հայկական խնդիր լուծելու միջոցին այսպիսի ներքին խռնակութեանց մէջ օտարաց մատը յայտնի կերպով: Տաճկահայ յոյ գղջաւոր և ազգաւոր մասի հետ, ժամ է որ ուսումնայք ալ աղաղակ բառնան այս վասակավայել դաւաճանութեան դէմ, որոյ նպատակն է հարցը սպաննել:

Պօլսեցի

Երեկ, սիրելի ընթերցող, յոգնել ես ինձ հետ մանգալով: Գնանք տուն և հանգստանանք այդ տեսակ յոգնեցող զբօսանքից յետոյ: Բայց միթէ տանը, նեղ շրջանում, դիրք կամ լրագիր կարդալով, մտաւորապէս մեղ հարստացնելով վերացական, իդէալական, վսեմ խառնկութեամբ մենք կարող ենք հանգստանալ... Ոչ, այդ անհնարին է. ոչ դու, ոչ էլ ես իդէալներ չունենք. մենք անբարոյական մարդիկ ենք:

Աւելի լաւ է հետեւնը ընդհանուր հոսանքին: Գնանք այս գիշերը կլուր, ամբողջ գիշերը թիթեղները մեղ թուղթ խաղալով, իսկ վաղը կը մտածենք, ինչպէս ուրիշներ թրիակին հետեւելով, դառնանք բարոյական մարդիկ, որպէս զի մեր կենքը ուրիշներ շրջանում տանելի լինի:

Բայց նկատում եմ թէ իմ այսօրվայ ֆիլիսոփոս բաւական տխուր տպաւորութիւն կը թողնի ընթերցողի վրա, եթէ քիչ չը զուարճանանք նրան: Ուրեմն, կը խօսեմ մի լուրի մասին, որ այս րօպէլիս ամենքին հետաքրքրում և զբաղեցնում է:

Նոյեմբերի 15-ին աշխարհի վերջնալու լուրը բաւական տարածված է մեր հասարակութեան մէջ, եթէ այդ լուրը ստուգվի, ներկայ ֆիլիսոփոսը կը լինի, երեկ իմ վերջին ֆիլիսոփոս:

Բայց, ինչպէս ասում է Մշակի թղթակիցը, ոչ մի տեղ այն աստիճան չեն հաւատում այդ լուրին, որքան Շամալի քաղաքում: Մեր թղթ-

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից հեռագրում են ուսու լրագիրներին որ կրկնապատկուածութիւնների ժամանակ Բերլինի երկու շրջաններում, որտեղ պրօգրէսիստները մրցում էին սօցիալիստների հետ, ընտրվեցան երկու պրօգրէսիստներ: Տրէգէր և Վրոց: Նրանց հետ մրցող սօցիալիստներ՝ Բէրէլ և Հադէնկէլ-Վէր, թէև շատ ձայներ ստացան, բայց չընտրվեցան:

—Բադէնի մեծ դուքսը սաստիկ հիւանդ է. դքսութեան կառավարութիւնը յանձնված է ժառանգին:

—Բիսմարկի դու ևս գտնվում է իր կալուածքի մէջ: Լրագիրները հաղորդում են որ նա տրեկար է և այս օրերս մի բժիշկ Բերլինից վարցին էր գնացել:

—Իշխան Բիսմարկի իր պաշտօնից հրաժարվելու լուրը դեռ ևս չէ ստուգվում: Կարծում են կայսր Վիլհէլմ ինքն անձամբ կը բանայ պարլամենտ: Եթէ Բիսմարկ հրաժարական տայ իր պաշտօնից, պահպանելով միմիայն արտաքին գործերի միջնադրի պաշտօնը, կարծում են որ նրա յաջորդը պետական կանցլերի պաշտօնի վրա կը նշանակվի գինեթաղ Մանտշֆէլ: Եւ զաս-Լօթարինգայի նախկին փոխարքան:

—Լօնդոնի լրագիրները հաղորդում են, որ ուսուց դեսպանը Կ. Պօլսոյ, պ. Նօվիկով, ուսու-թիւրքական յանձնաժողովի նիստում խիստ կերպով յայտնեց, որ Բ. Գուռը իրաւունք չունի առանձին դաշնագրի կապել Թիւրքաց պարտաւորահանների տէրերի հետ, և եթէ նա այդ քայլը կանի, զրանով Բ. Գուռը կը քանդի հոկտեմբերի 3-ին իր տուած խոստումը: Բացի դրանից պ. Նօվիկով յայտնեց, որ Ռուսաստանը կը հակառակվի Թիւրքիայի իր պարտաւորների հետ կայացրած ամեն տեսակ համաձայնութեանը, եթէ դրա հետ միաժամանակ չի կարգադրվի և Ռուսաստանին զինուորական կօնտրբուցիայի վճարելու հարցը:

—Վիեննայից հեռագրում են որ Մեծ Իշխան Կօնստանտին Նիկոլայիվիչ համեմելով Աւստրիայի մայրաքաղաքը, այցելութիւն ընդունեց աւստրիական կայսրին և նրան միւս օրը վերադարձրեց այցելութիւնը: Նոյնպէս Նորին Բարձրութիւնը ընդունեց այցելութիւններ մեծ պետութիւնների բոլոր դեսպաններից:

—Լրագիրներին Լօնդոնից հեռագրում են, հոկտեմբերի 29-ին հետեւալով: Լօրդմէրին տուած բանկետում Վրադաուս մի ճառ արտասանեց, որի մէջ յայտնեց թէ գործերի դուրսիւնը իրականութեամբ լաւանում է և կալուածական օրէնքները բարեխղճաբար կը կատարվեն, բացի դրանից գովում էր Տրանսիլլայի հօլանդացի բնակիչներին: Գրանիլլ յայտնեց, որ անգլիական քաղաքակա-

թակիցը գրում է որ Շամալու սրբազան առաջնորդը նորերում հաշտվել է իր թշնամու հետ, որովհետեւ այդ վերջինի մասնակը վախճանվել է: Թղթակիցը ցանկութիւն է յայտնում որ սրբազանը իր միւս թշնամիների հետ հաշտվի առանց սպառնելու որ նրանց երեսխները մեռնեն: Բայց եթէ նոյեմբերի 15-ին աշխարհի վերջնալու լուրը ուղիղ յայտնվի—այն ժամանակ Շամալու սրբազան առաջնորդը, երեկ, իր բոլոր թշնամիների հետ կը հաշտվի, որովհետեւ բոլորն էլ մեռած կը լինեն:

—Աշխարհի վերջնալու մասին խօսելով, յիշեցի մի անցք, որ պատահել է նորերում (Մշակի): Խմբագրութեան մէջ և որ շատ յատկանիշ է թիֆլիսեցի հայի փոքրիկ բնաւորութիւնը նկարագրելու համար: Նոյեմբերի 1-ին մտնում է մեր խմբագրատունը մի թիֆլիսեցի հայ:

—Կամենում եմ գրվել «Մշակին» երկու ամսով, այսինքն նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Ինչքան արժէ երկու ամսվայ բաժանորդագրութիւնը, հարցնում է նա, դիմելով խմբագրին:

—Նրկու մանէթ, եղաւ պատասխանը: —Շատ լաւ: Բայց եթէ նոյեմբերի 15-ին աշխարհը կը վերջանայ, այն ժամանակ ինչ պէտք է անենք, տարակուսած հարցնում է նոր բաժանորդը:

—Այն ժամանակ մեր ձեզ տուած ապահովագրի հիման վրա դուք ամեն րօպէ կարող էք յետ ատանալ մեղանից մի մանէթ ու կէս, պատասխանում է խմբագիրը:

նութիւնը եգիպտոսում միայն նպատակ ունի այդ երկրի բարօրութիւնը: Ֆրանսիան նոյնպիսի կարծիք ունի: Երկու պետութիւններն ևս պարտաւոր են առանց կասկածութեան և փառասիրութեան համաձայնութեամբ գործել: Իսկ ինչ որ վերաբերում է Ֆրանսիայի հետ առեւտրական դաշնագրի կապելուն, Անգլիան այդ դաշնագրին ոչ թէ առեւտրական կէտից է նայում, այլ քաղաքական: Ինքն, հուսալով, շատ կը ցաւէր, եթէ այդ երկու պետութիւնների մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները թուլանային:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 Նոյեմբերի: Էկսպերտներին նիստին նոյեմբերի 5-ին վճռված է, արեւմտեան երկրներում խմբների գործի վրա հակողութիւնը քաղաքների մէջ յանձնել դուստներին, իսկ գաւառների մէջ նոր մասնաժողովներին: Նոյեմբերի 6-ին վճռված է ոչնչացնել պրօպինացիօնական իրաւունքը: Վարչական քաղաքների մասնաժողովը հաւաքվում է իւրաքանչիւր շաբաթ: Չորս նիստերի ընթացքում քննված են 300 գործեր: Նոյեմբերի 5-ին Բօսնիայի մէջ ապստամբներ են յայտնվել: Նոյեմբերի 1-ից հաղորդում են, որ ապստամբութիւնը Կատարօի նահանգում վճռողական բնաւորութիւն է ստանում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 Նոյեմբերի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ., երկրորդ 91 ռ. 75 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 90 ռ. 87 կ., հինգերորդ 90 ռ. 75 1/2 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ռ. 75 կ., երկրորդ 214 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 90 ռ. 12 կ., երկրորդ 90 ռ. 12 կ., երրորդ 90 ռ. 12 կ., ոսկի 7 ռ. 67 1/2 կ.: Ռուսաց 1 բուրլ Լօնդոնի վրա արժէ 25,75 պէնս, Ամստերդամի վրա արժէ 130,75 պէնս, Բուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 219 մարկ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Այդ պատասխանից յետոյ թիֆլիսեցի հայը վճարում է երկու բուրլ և ապահովագրիւր ձեռնին, հանգստացած դուրս է գալիս մեր խմբագրատանից, համոզված լինելով, որ եթէ աշխարհն էլ վերջանայ, նա կորցնելու չէ իր մեղ տուած 1 բուրլ 50 կօպէկ:

Մի ուրիշ թիֆլիսեցի մտնում է մի բանկ, որտեղ ունի մի վէկսէլ թափելու:

—Ե՞րբ է վէկսիլիս արօղը (պայմանաժամը) հարցնում է նա բանկի պաշտօնեաներից միին:

—Նոյեմբերի 14-ին, պատասխանում է պաշտօնեան:

—Չի լինի որ 16-ին թափվում...

—Ինչպէս կը կամենաք, բայց այն ժամանակ երկու օրվայ պրօքէիստ պէտք է վճարէք:

—Ջուստ աչքիս, համ վէկսիլն էլ կու թափիմ, համ էլ տոկոս կու վճարիմ: Իս միտք էի անում թէ որ աշխարհը 15-ին չի վերջանայ, խօս գիւր կու վճարիմ էքսի օրը: ամա թէ որ դուրստ է աշխարհի վրջնալը, ինչպէս որ ասում ին, —խօս ձիր բանկն էլ կու ջնջվի... Էնչախը ինչ կօնիք իմ 5,000 մանէթս, մայնց իմ ջիւրումս մնայ էք փողը ու իս էլ, օղուշաղիս հիդ, էս տարվայ թանգութիւնին դիմանամ:

Այսքան խելք կարող է միայն մի թիֆլիսեցի ունենալ:

ԱՍԻԱՅԻ

